

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ԱՍՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայտնի է, որ ասորիները վաղուց են հետաքրքրություն ցուցաբերել Հայոց աշխարհի լուսավորիչ Գրիգոր Պարթևի անձի ու գործունեությանն նկատմամբ: Դեռևս Ը դարի սկզբում ոմն Յեշուա ճգնակյաց քահանա, դիմելով Արաբաց եպիսկոպոս Գեորգին, խնդրել էր մանրամասնություններ հաղորդել նրա մասին, և վերջինս 714 թ. գրած պատասխանն նամակով քավարել էր խնդրատիրոջ պահանջը¹: Սակայն բացի այս նամակի թեև բովանդակային, բայց համառոտ ակնարկից, ասորական գրականությունը, ի տարբերություն արևելաքրիստոնեական մյուս գրականությունների, ավելի ընդարձակ հիշատակություն չէր պահպանել Ագաթանգեղոսի պատմության կամ Գրիգոր Լուսավորչի կենսագրության վերաբերյալ: Այս հանգամանքը երկար ժամանակ արդարացիորեն զարմանք էր պատճառում քանասերներին, քանի որ, ինչպես հայտնի է, Ագաթանգեղոսի պատմությունը և Գրիգորի վարքը մեզ են հասել բազմալեզու խմբագրություններով և տարբերակներով, ուստի դժվար էր հավատալ, որ ասորական գրականությունը կարող էր դուրս մնալ այս համաքրիստոնեական ավանդույթից:

Եվ ահա, վերջերս հայտնաբերվեց Ագաթանգեղոսի պատմության վաղուց ըստաված ասորական խմբագրությունը, որը 1977 թվականին հանդիպադիր ֆրան-

սերեն թարգմանությամբ հրատարակեց բելգիացի հայագետ Միշել վան Հաբրոկը²: Մինչ այդ, 1971 թվականին, նույն հեղինակը հրատարակել էր նաև նշված բնագրի ասորատառ արաբերեն (քարշունի) թարգմանությունը³: Նորահայտ խմբագրության վերլուծության արդյունքները Մ. վան Հաբրոկն, ամփոփել է այս վերջին հրատարակությանը կցված ընդարձակ և խորաբովանդակ պատմա-քանասիրական հետազոտության մեջ⁴: Զանի որ քարշունի բնագիրը և ավելի ուշ հայտնաբերված ասորերեն թարգմանությունը համարյա քաջարձակապես նույնական են, ուստի նշված հետազոտությունը, առանց էական վերապահումների, միանգամայն վերաբերելի է նաև վերջինիս: Այդ իսկ նկատառումով էլ հեղինակը հարկ չի համարել նույնպիսի ընդարձակ ուսումնասիրություն կցել նաև ասորական բնագրի հրատարակությանը:

² M. van Esbroeck, Le résumé syriaque de l'Agathange, „Analecta Bollandiana“, t. 95, Bruxelles, 1977, p. 291—358. Գրախոսությունը տե՛ս Հ. Մեղրոնյան, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1978, № 8, 108—111:

³ M. van Esbroeck. Un nouveau témoin du livre d'Agathange, „Revue des Études Arméniennes“, N S, t. VIII, Paris, 1971, p. 13—95. Գրախոսությունը տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, «Պատմա-քանասիրական հանդես», 1978, № 2, էջ 308—304:

⁴ Անդ, էջ 97—187: Սույն խմբագրությանը Մ. վան Հաբրոկը մի լրացուցիչ ուսումնասիրություն է նվիրել նաև «Հանդես ամսօրեայ» ամսագրում, M. van Esbroeck, Le résumé syriaque de l'Agathange et sa portée pour l'histoire du développement de la légende, «Հանդես ամսօրեայ», 1978, էջ 498—510:

¹ Գեորգ եպիսկոպոսի նամակի՝ Գրիգոր Լուսավորչին վերաբերող հատվածի հայերեն թարգմանությունը տե՛ս Հ. Տաշյան, Ագաթանգեղոս առ Գեորգայ Ասորի եպիսկոպոսին և ուսումնասիրությունն Ագաթանգեղոսի գրոց, Վիեննա, 1891, էջ 4—10. Հ. Մեղրոնյան, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից (3—5-րդ դարեր), Երևան, 1970, էջ 190—197:

Ասորական խմբագրության բնագիրը պահպանվել է Դամասկոսի Ուղղափառ պատրիարքարանի № 12/18 ձեռագրում, ընդօրինակված 1184—1185 թթ., ամենայն հավանականությամբ, Հակոբիկյան եկեղեցու նշանավոր գործիչ Միքայել Ասորու (մահ. 1199 թ.) ձեռքով⁵։ Արաբերեն-քարշունի թարգմանությունը կատարվել է 1732 թվականին Բեշարա Հալեպցի վանականի կողմից և պահպանվել է այդ նույն թվականին ու մինևույն անձնավորության ձեռքով ընդօրինակված մի ծավալուն սրբախոսական ժողովածուում, որը պարունակում է 125 միավոր և այժմ կրում է Երուսաղեմի Սուրբ Մարկոսի վանքի մատենադարանի 38 համարը։ Թարգմանիչ-գրիչը մանրամասն տեղեկություններ է հաղորդում այդ ձեռագրի ասորական նախագաղափար օրինակի՝ 1178 թվականին ընդօրինակված մի ժողովածուի մասին, որն ընդգրկել է մինևույն 125 սրբախոսական հուշարձանները։

Համեմատությունից պարզվում է, որ քարշունի բնագիրն ասորերենի բառացի, ստրկական թարգմանությունն է, ի լեզվական պատճենումներով և այլ բնույթի ասորաբանություններով։ Ջուտ մշակության հետաքրքրությունից բացի, այն որևէ բանասիրական և բնագրագիտական արժեք չի ներկայացնում։ Ուստի պետք է նկատի ունենալ, որ հետագա շարադրանքում, Ագաթանգեղոսի ասորական խմբագրությունը հիշատակելիս, միշտ ենթադրվում է նրա ասորերեն բնագիրը։

Եթե քարշունի թարգմանության սկզբնագրի հարգը որևէ կասկած չի հարուցում, ապա նույնը չի կարելի ասել ասորական խմբագրության նախօրինակի մասին, որի պարզաբանմանն է նվիրված Մ. վան Էսբրոկի ուսումնասիրության մի զգալի մասը⁶։ Բնագրի լեզվական քննությունը, և մանավանդ հատուկ անունների գրության առանձնահատկությունների վերհանումը, հմուտ աշխատասիրողին հանգեցրել է այն համոզիչ եզրակացությանը, որ ասորերեն թարգմանության հիմքում ընկած է մի անծանոթ հայկական նախօրինակ։ Քննության ենթարկված 89 անուններից այդ եզ-

րակացության օգտին են խոսում հատկապես հետևյալ տասնմեկը, Էմրա (հայերեն **Գառնիկ** անվան ասորերեն թարգմանությունն է), Ատաչ, Եկեղեաց, Գոմեր, Հեռակիոս, Լիկիանոս, Պատրիարք, Հոփսիմե, Տրդատ, Վահեվահեան և Վաղարշապատ⁷։ Բացի հատուկ անունների տառադարձության առանձնահատկություններից, հեղինակը ասորական խմբագրության մեջ նշում է նաև մի շարք այլ հայկաբանություններ։ Այսպիսով, մեզ թվում է, որ ասորերեն թարգմանության նախօրինակի հարցը Մ. վան Էսբրոկի մանրակրկիտ վերլուծության շնորհիվ միանգամայն ապացուցված կարելի է համարել։

Առաջին իսկ հայացքից նկատելի է, որ նորահայտ բնագիրը յուրահատուկ տեղ է զբաղեցնում Ագաթանգեղոսի մինչ այժմ ասորերենի բոլոր ընդարձակ և համառոտ խմբագրությունների շարքում։ Այն փաստորեն Ագաթանգեղոսի պատմության մի վերամշակված համառոտագրությունն է, լրացված հայկական ազգային խմբագրության և Գրիգորի վարքի հունարեն-արաբերեն ճյուղը ներկայացնող բնագրերի տվյալներով⁸։ Խմբագրության մեջ ներկայացված են Գրիգորի կյանքի և գործունեության բոլոր հայտնի դրվագները, բացի Էջմիածնի եկեղեցու կառուցմանը վերաբերող նրա տեսիլքից (Ագաթ. 132—156) և ընդարձակ վարդապետությունից (Ագաթ. 259—715), որը փոխարինված է մի համառոտ և միանգամայն ինքնուրույն ուսուցողական քարոզով (§§ 151—191)։ Ավելի էական է, սակայն, ասորական բնագրում հետևյալ հավելյալ դրվագների առկայության հանգամանքը. ա. Հայոց դարձը Սանատրուկի օրոք Թադեոս առաքյալի քարոզությամբ (§§ 1—4), բ. Մանի կույսի պատմությունը և Գրիգորի մահը Մանեայ այրքում (§§ 287—292), գ. Գրիգորի նշխարների փոխադրումը Թորդան գավառ Գառնիկ (Էմրա) ճգնակյացի ձեռքով (§§ 293—300)։ Նշված դրվագները, որոնք բացակայում են ագաթանգեղյան մնացյալ խմբագրություններում, ինչպես հայտնի է, առկա են միայն Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ (Խոր., Բ, 31—34, 91), մի հանգամանք, որ մինչև վերջերս

⁵ Միքայել Ասորու հետաքրքրությունը Հայոց աշխարհի լուսավորչի նկատմամբ պատահական չպետք է համարել։ Ինչպես հայտնի է, նրա հսկայածավալ «Ժամանակագրությանը» կցված է նաև Հայաստանի պատմությանը նվիրված մի համառոտ հավելված։

⁶ M. van Esbroeck, Un nouveau témoin, p. 90—112.

⁷ Անդ, էջ 112։ Սրանց, ըստ երևույթին, կարելի է ավելացնել նաև Արտաշատ, Արտաշես և Աշոտի-շատ անունները, որոնց կախումը հունական տառադարձությունից քաջատված է։

⁸ Հմմտ. M. van Esbroeck, Agathangelos. — In: Reallexikon für Antike und Christentum, Stuttgart, 1935, S. 239—247.

հետազոտողներից շատերին ևս մի առիթ էր տալիս կասկածելու պատմահոր տղվայլների արժանահավատությանը: Ասորական խմբագրության հայտնաբերումն, այդպիսով, վերջնականապես ցրում է այդ կասկածը և պերճախոս կերպով հաստատում, որ Խորենացին իսկապես իր ձեռքի տակ ունեցել է Ագաթանգեղոսի պատմության մի տարբերակ, որն զգալիորեն տարբերվել է մեզ հասած բազմալեզու բնագրերից, կամ էլ, որ ավելի հավանական է, նա ծանոթ է եղել մի քանի խմբագրությունների⁹: Ահա սա է Ագաթանգեղոսի ասորական խմբագրության բերած հիմնական և հույժ կարևոր նպաստը հայկական մատենագրության վաղ շրջանի ուսումնասիրման գործին:

Ծատ ավելի բարդ է ասորական խմբագրության առաջացման հանգամանքների, այսինքն՝ նրա ստեղծման միջավայրի, ժամանակի և գաղափարական բովանդակության պարզաբանումը: Հարկ ենք համարում շեշտել, որ այս խնդիրների քննության ընթացքում Մ. վան Էսբրոեկը միանգամայն ճիշտ մեթոդաբանական սկզբունքներ է կիրառում: Այսպես, իր ուսումնասիրության սկզբում նա իրավացիորեն ընդգծում է հետևյալը. «Առաջին հայացքից մի այնպիսի ավանդության համառոտություն, որը համակողմանիորեն հայտնի է վկայությունների հսկայական քանակով, մեծ հետաքրքրության արժանի չի թվում: Սակայն իրականում այս նոր բնագիրը անակրճակներ է պարունակում: Համառոտողը մեզ է փոխանցել մի ավանդություն, որտեղ խախտված են և՛ ժամանակագրությունը, և՛ տեղագրությունը, և՛ հերոսների հոգեբանությունը, և՛ դավանաբանական ձևակերպումները»¹⁰: Զարգացնելով իր միտքը, մի այլ առիթով հեղինակը նշում է. «Ավանդությունները առանձին քերթողների գրական երևակայության կամ ստեղծագործական մտքի շնորհիվ չէ, որ վերափոխվում են: Նրանք սովորաբար հասարակական արմատներ ունեն և ծառայում են պատմական որոշակի նպատակի: Եվ իսկապես, Ագաթանգեղոսի ազգային ավանդության դեպքում խմբագրությունների զանազանությունը համապատասխանում է կրոնական և քաղաքական նորանոր իրա-

դրությունների հարմարեցման պահանջին»¹¹:

Այս ճշմարտացի ելակետային դրույթների հիման վրա աշխատասիրողը համակողմանի պատմա-բանասիրական քննության է ենթարկում նորահայտ խմբագրությունը, վեր հանում նրա աղերսներն ու յուրահատկությունները / ագաթանգեղյան բնագրագիտության ոլորտում, որ թույլ է տալիս հանգել բավականին հետաքրքիր և միանգամայն հավանական եզրակացությունների:

Ըստ Մ. վան Էսբրոեկի՝ նորահայտ խմբագրությունը կամ նրա ընդարձակ նախօրինակը ձևավորվել է քաղկեդոնական հայերի միջավայրում, Հայոց Հովհաննես Բագարանցի հակաթոռ կաթողիկոսի օրոք (590—611)¹²: Այս ենթադրությունը, որ հեղինակի մոտ համոզմունքի երանգ ունի, հիմնվում է հետևյալ փաստարկների վրա:

Ինչպես հայտնի է, 591 թվականին Մորիկ կայսեր նախաձեռնությամբ Բյուզանդական Հայաստանի կաթողիկոսական նստավայր է ընտրվում ներկայումս Երևանի տարածքում գտնվող Ավան գյուղաքաղաքը: Նույնպես հայտնի է, որ այդ ժամանակ Պարսկական Հայաստանի քաղաքական, տնտեսական ու հոգևոր կենտրոնը, այն է՝ երկրի մայրաքաղաքը, Դվինն էր, որտեղ և նստում էր Ամենայն Հայոց կաթողիկոսը: Այդ իսկ պատճառով Ավանի ընտրությունը որպես հակաթոռ կաթողիկոսի նստավայր պատահական չպետք է համարել. դա անհրաժեշտ էր նախ՝ ազգային Եկեղեցու ազդեցությունը հակակշռելու, և երկրորդ՝ հայոց ավանդական արքավայրերի՝ Վաղարշապատի ու Խոր-վիրապի մերձակցությունը ապահովելու տեսակետից: Ավանի կաթողիկոսարանը, հեղինակություն ձեռք բերելու նպատակով, գաղափարական հողի վրա ձգտում է հաղորդակից դառնալ այդ արքավայրերին ու նրանց հետ կապված ազգային ավանդություններին: Ուստի ստեղծում է Ագաթանգեղոսի մի սեփական խմբագրություն, զգալի միջամտություններով այն հարմարեցնելով իր հետապնդած նպատակներին: Այս առումով չափազանց պերճախոս է հետևյալ փաստը:

Ագաթանգեղոսի ասորական խմբագրության համաձայն՝ Դիոկղետիանոսի հալածանքներից փախած և Հայաստանում ապաստան գտած Հռիփսիմյանց կույսերի

¹¹ Անդ, էջ 113:

¹² Հովհաննես Բագարանցու մասին մանրամասն տե՛ս Մ. արք. Օրմանյան, Ագապատում, §§ 389—390, 435:

⁹ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Ագաթանգեղոսի խմբագրությունների հարցը ըստ Խորենացու տվյալների, «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 4, էջ 129—139:

¹⁰ M. van Esbroeck, *Uitgeverij*, 1975, 19.

թիվը հավասար է յոթանասուցյոթի (§ 77): Նրանցից քսոասունը հաստատվում են Դվինի մերձակայքի մի լքված հնձանում, իսկ մնացյալ երեսուցյոթը գալիս են Գառնի բերդի մոտ գտնվող Ավան գյուղաքաղաքը և բնակվում լեռնային մի քարայրում (§ 78): Դժվար չէ նկատել, որ, ի հակակշիռ Վաղարշապատում նահատակված երեսուցյոթ կույսերի, Ավանն իր հերթին հավակնում է երեսուցյոթ այլ արքունիների նշխարներին տիրելու պատվին: Տվյալ դեպքում չպետք է տարակուսանք առաջացնի այն հանգամանքը, որ Վաղարշապատի հնձանին (Ագաթ. 150) ասորական խմբագրության մեջ փոխարինել է Դվինի հնձանը: Դա արտահայտությունն է պատմական այն իրողության, որ Զ—Է դարերում Վաղարշապատը կորցրել էր իր կարևորությունն ու վաղեմի փառքը և Հայաստանի մայրաքաղաքի պատիվը զիջել Դվինին: Այս փաստն, ի միջի այլոց, Մ. վան Էսբրոեկի համար նորահայտ խմբագրության հայկական նախօրինակի թվագրման հիմնական կոլաններից մեկն է հանդիսանում¹³:

Առաջին հայացքից Մ. վան Էսբրոեկի տվյալ մտակառուցման մեջ ամեն ինչ հիմնավորված և տրամաբանական է թվում: Դժբախտաբար, սակայն, բնագրի աղճատված լինելու հանգամանքը կամ նրա կասկածելի վերծանությունը որոշ չափով նվազեցնում է վարկածի համոզականությունը: Խնդիրն այն է, որ ասորերեն թարգմանության մեջ Հոփսիմյանց կույսերից զատված երեսուցյոթ արքունիների ապաստանը հիշատակված է հետևյալ ձևով. 'wwn ʿyḏ bṛgry (§ 78): Եթե 'wwn գրության **Աւան** ընթերցումը (=Awawan) դեռևս տարակուսանք չի առաջացնում, ապա bṛgry-ի՝ Բերդ-Գառնի (=berd garṇy) վերծանումը բռնազբոսիկ է թվում: Պատահական չէ, որ հետագայում Մ. վան Էսբրոեկն այդ անվանումը փորձում է կարդալ Բերդ-Արի (այսինքն՝ Արին-բերդ)¹⁴: Մինչդեռ, ինչպես իրավացիորեն նշել է ասորագետ Հ. Մելքոնյանը¹⁵, այդ բառը, առանց որևէ փոփոխության, բնական է ընթերցել **Բերկրի**, որը միջնադարյան Հայաստանի նշանա-

վոր գյուղաքաղաքներից էր¹⁶: Սրանից հետևում է, որ եթե ճիշտ է Հ. Մելքոնյանի առաջարկությունը, ապա կասկածելի է դառնում նաև **Աւան** ընթերցումը¹⁷: Ուստի,

¹⁶ Բերկրիի մասին մանրամասն տե՛ս Հ. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հատ. 1, Վենետիկ, 1903, էջ 420. Թ. Հակոբյան, Ս. Մելք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 1, Երևան, 1986, էջ 676:

¹⁷ Երևակայությանը մի փոքր ազատություն տալու դեպքում կարելի է թերևս 'wwn-ը կարդալ **Վան**, քննության ատարկա տողը վերծանելով հետևյալ կերպ. «գնացին Վան, Բերկրի քաղաքի մոտ» (§ 78): Առաջին հայացքից արտառոց թվացող այս բացատրությունը, ինչպես կտեսնենք սուրբ, բոլորովին գուրկ չէ հիմքից: Ըստ Գրիգոր Լուսավորչի վկայաբանության Վասպուրականում ձևավորված մի խմբագրության, որի մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Գ. Տեր-Մկրտչյանը («Ագաթանգեղոսի Պատմություն Հայոց», աշխատության Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Կանաչյան, Տփղիս, 1909, էջ ԾԲ—ԾԳ, 78), և որին անդրադառնում է նաև Մ. վան Էսբրոեկը (M. van Esbroeck, Un nouveau témoin, p. 160—161), Հոփսիմյանց կույսերի մի խումբ ապաստան է գտնում Վանա լճի շրջակայքում, Բզնունյաց լեռներում: Հարկ ենք համարում մեջբերել վկայաբանության համապատասխան հատվածը, պահպանելով ձևագրի ուղղագրությունը. «Եւ զայս կարծիս առեալ արքոցն, փախստական եղևալ ի Հոմմա Հ կուսամաք, հանդերձ քահանայիքն իրեանց, և նաեցին լեզիպտոս: Եւ անդի եկեալ յերուսաղէմ և երկրպագեալ սուրբ տեղեացն, և երեկցաւ նոցա ի տեղեանն ամենասրբոհի Աստուածածինն և ասաց գնալ ի Միջագետս, ի քաղաքն Ուռհա, և երկըրպագեալ տերունական պատկերին, զոր առաքեալ էր Աբգարու: Եւ յորժամ եկին անդ ըստ հրամանի տեղեանն, դարձեալ երեկցաւ և հրամայեաց ելանել ի Հայս, ի վիճակն Թադեոսի: Իսկ ճ[ոց]ա համագունդ եկեալ ի վերին կողմանս արևելից, և շրջեալ ընդ վերին աշխարհն, մնացին ոմանք ի լիթինս Դարանաղեաց, և բազումք ի նոցանէ հանդերձ քահանայիս ի լիթինն Բզնունեաց դարարեցին, կրկով ընդ ինքեանս զպատուական սուրբ խաչն, որով առնէին մեծամեծ նշանս: Եւ մնաց յետ վախճանի նոցա նոյն սուրբ խաչն ի լեւոն Վարազա, և յետո գտաւ յաւորս Թոփկայ: Իսկ Գայիսանա հանդերձ Հոփսիմեան և Լէ ընկերուք աստուածաին ազդեցութեամբն եկին ի մայրաքաղաքն Վաղարշապատ» (Մատթոցի անվան Մատենադարան, ձեռ. 1524, ժառընտիր, տող՝ Վարազ, թիվ՝ 1401/2, էջ 567ա): Ինչպես հայտնի է, Բզնունյաց լեռները գտնվում են Վանա լճի արևմուտքում, իսկ Վարազը՝ արևելքում: Սակայն հայտնի է նաև, որ Բզնունիքի ազդեցությամբ լինը մուկպես հաճախ

¹³ Տե՛ս M. van Esbroeck, Un nouveau témoin, p. 143.

¹⁴ Տե՛ս M. van Esbroeck, Le résumé, 1977, p. 309, n. 1.

¹⁵ Տե՛ս Հ. Մելքոնյան, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1978, № 8, էջ 110:

նշված հակասությունների առկայությամբ, Մ. վան Էսբրոկի առաջ քաշած վարկածը նոր ու ավելի համոզիչ փաստարկներ է պահանջում:

Հեղինակը մեզն փաստարկ է համարում հայերի մկրտության տեղագրության միտումնավոր խախտումը Ագաթանգեղոսի ասորական խմբագրության մեջ: Ի տարբերություն Ագաթանգեղոսի հայերեն խմբագրության, որտեղ, ինչպես հայտնի է, հայերի զանգվածային մկրտությունը Գրիգոր Լուսավորիչը կատարում է Տարսնո աշխարհում, Արածանիի ակունքների մոտ, ասորական բնագրում այդ արարողությունը կատարվում է բուն Եփրատի ակունքների մոտ, Կարին քաղաքի շրջակայքում, որտեղ 604 թվականից պարսից արշավանքների հետևանքով ապաստան էր գտնվել Հովհաննես Բագարանցին: Մասնավորապես այդ են վկայում մկրտության դրվագում հիշատակվող Արծն, Եկեղիք և Խոզան տեղանունները (§§ 251—253), որոնցից առաջին երկուսը գտնվում են Բարձր Հայքում, իսկ երրորդը՝ վերջինիս հարևան Օտիսաց աշխարհում կամ Չորրորդ Հայքում: Հատկանշական է նաև այն, որ Օտիակաթի ավանդությունն այստեղ նույնպես կապվում է Եփրատի ակունքների հետ (§ 258): Տեղագրական այս բոլոր փոփոխություններն, ըստ Մ. վան Էսբրոկի, կատարվել են Հայոց դարձի ավանդությունը հունական Հայաստանի տարածքի հետ կապելու և դրանով իսկ հայաթաղկեղծական Եկեղեցու հեղինակությունը քարձրացնելու միտումով¹⁸: Թեև ընդհանուր առմամբ հեղինակի այս փաստարկը համոզիչ է թվում, սակայն այստեղ էլ տարակուսանք է առաջացնում Արծն և Խոզան տեղանունների առկայության խընդիրը, քանի որ այդ քաղաքների մասին հայ մատենագրության հնագույն հիշատակությունները, ինչպես հայտնի է, վերաբերում են ավելի ուշ ժամանակների (Ժ—ԺԱ դդ.)¹⁹:

Կոչվել է Բզնունյաց ծով: Այս վերջին անվանումն իր հերթին կարող էր Բզնունյաց անունն ընդհանրապես տարածել լճի շրջապատի բոլոր լեռների, այդ թվում նաև Վարազի վրա: Կարելի է նշել Ագաթանգեղոսի ասորական և վասպուրականյան խմբագրությունների ևս մի ընդհանրություն. երկու բնագրերում էլ առկա է Գառնիկ ճգնավորի ձևով Գրիգոր Լուսավորչի նշխարների հայտնաբերման դրվագը (հմմտ. անդ, էջ 570թ):

¹⁸ Տե՛ս M. van Esbroeck, Un nouveau témoin, p. 145—149.

¹⁹ Այդ քաղաքների մասին մանրամասն տե՛ս

Հունահայոց Եկեղեցու գաղափարամիտումն, ըստ Մ. վան Էսբրոկի, իր արտահայտությունն է գտել ոչ միայն տեղագրական փոփոխություններում, այլև որոշ դասանաբանական ձևակերպումներում²⁰: Մասնավորապես Ագաթանգեղոսի ասորական խմբագրության հետևյալ հատվածում, նրա կարծիքով, ընդգծված և գլխավոր տեղ է հատկացված Քրիստոսի մարդկային բնությանը. «Եվ նա մարմնացավ Սուրբ Հոգուց ու Մարիամ անարատ կույսից. հրաշքով ծնվեց նրանից, մինչդեռ պահպանվել էր նրա կուտության դրոշմը: Եվ նա, ինչպես առաջ, մնաց Աստված՝ անփոփոխ, անալլալ, անշփոթ և անխառն՝ մեկ, բայց Աստված և մարդ, միավորված սքանչելի կատարելությամբ» (§ 160): Ինչպես տեսնում ենք, ընդգծված բառերն իրականում ապացուցում են ճիշտ հակառակը. տվյալ ձևակերպման մեջ շեշտված է հենց Քրիստոսի աստվածային բնությունը (թեև նա մարմին ստացավ, բայց մնաց Աստված): Թյուրիմացությունն առաջացել է նրանից, որ Մ. վան Էսբրոկը քարշունի բնագրի 'lh' (Աստված) բառը սխալմամբ ընթերցել է z'l'h' (իր կյանքի ընթացքը), որով միանգամայն աղավաղվել է բնագրի միտքը: Ժիշտ է, թեև հետագայում, ասորերեն բնագրի հրատարակության մեջ հեղինակը նկատել և ուղղել է այդ սխալը²¹, բայց իր նախկին մեկնաբանության նկատմամբ վերաբերմունք չի ցուցաբերել:

Նկատի ունենալով վերը նշված հանգամանքները, Մ. վան Էսբրոկը ենթադրում է, որ ասորական խմբագրության հայերեն նախօրինակն, ամենայն հավանականությամբ, ստեղծվել է 604 (ավելի ճիշտ՝ 607) և 610 թվականների միջև, երբ Հովհաննես Բագարանցին ապաստան էր գտել Կարինի մերձակայքում, բացառված չէ՝ հենց Արծն քաղաքում²²: Ինչպես հայտնի է, 607 թվականին հայոց Աբրահամ Աղբաթանեցի կաթողիկոսը (608—615 թթ.) հալածանք էր սկսել հայ-հունական Եկեղեցու քաղկեդոնական ներկայացուցիչների դեմ, հետևաբար դրանից առաջ մեզն միտումնավոր փոփոխությունների անհրաժեշտություն չէր

Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 450. Հ. Եփրիկյան, նշվ. աշխ., հատ. 1, էջ 304—305. հատ. 2, Վենետիկ, 1907, էջ 187:

²⁰ Տե՛ս M. van Esbroeck, Un nouveau témoin, p. 135—138.

²¹ Տե՛ս M. van Esbroeck, Le résumé, 1977, p. 326.

²² Տե՛ս M. van Esbroeck, Un nouveau témoin, p. 153.

կարող լինել: Նորահայտ խմբագրության թվագրման համար կարևոր է նաև այն դրվագը, որտեղ պատմվում է Հերակլիոս կայսեր կողմից Թորոսանի եկեղեցու վերակառուցման մասին (§ 300): Դրանից հետո, երբ հայոց Եզր (630—641 թթ.) և Ներսես Գ. (641—661) կաթողիկոսների օրոք վերականգնվում է Հայ Եկեղեցու միասնականությունը, այդ խմբագրությունն արդեն կորցնում է իր այժմեականությունը, որով և բացատրվում է նրա չափազանց սահմանափակ տարածումը²³:

Ինչպես վերը նշվեց, Ագաթանգեղոսի ասորական խմբագրության ժամանակը պարզելու հարցում Մ. վան Էսբրոեկը իրավացիորեն նշանակալից է համարում Վաղարշապատի նկատմամբ Դվինին հատկացված կարևորության հանգամանքը, որը պատմականորեն պատշաճում է Ջ—Է դարերին: Նման մի փաստ էլ նա տեսնում է ասորերեն բնագրում կաթողիկոս տիտղոսի անկալության մեջ (§§ 237, 239, 273, 274, 278, 284)²⁴: Ըստ նրա՝ այդ տիտղոսը Հայ Եկեղեցում կանոնական ուժ է ստացել միայն Դվինի 555 թ. ժողովից հետո որպես նրա ինքնուրույնության արտահայտություն: Դա ապացուցվում է նրանով, որ նշված տիտղոսը չի հիշատակվում «Գիրք թղթոցի» սկզբում զետեղված հնագույն բնագրերում, իսկ Անանուն հայ քաղկեդոնականի գրած է դարի ժամանակագրության մեջ (Narratio de rebus Armeniae) գործածվում է միայն սկսած Ջ դարի կեսերից, Ներսես Բ-ի ժամանակներից: Թեև կաթողիկոս բառը հանդիպում է նաև Փավստոս Բուզանդի և Ղազար Փարպեցու «Պատմություններում», սակայն, Մ. վան Էսբրոեկի կարծիքով, առաջինի մոտ այն հետագա ընդմիջարկություն է հանդիսանում, իսկ երկրորդի մոտ՝ ասորա-նեստորական ավանդույթի մի ոչ պաշտոնական արտացոլում²⁵:

²³ Տե՛ս անդ, էջ 153, 163:

²⁴ Տե՛ս անդ, էջ 143. նաև՝ M. van Esbroeck, Le résumé, 1976, p. 501.

²⁵ Ի միջի այլոց հարկ է նշել, որ ինչպես այս, այնպես և ուրիշ դեպքերում Մ. վան Էսբրոեկը երբևէ, մեղմ առած, «անգույշ» վերաբերմունք է ցուցաբերում հայ մատենագրության բանասիրական խնդիրների լուծման ընթացքում: Այսպես, Մովսես Խորենացուն նա անվերապահորեն համարում է Ը դարի ղեկավար (M. van Esbroeck, Un nouveau témoin, p. 113), իսկ այնուհետև, տրամաբանական հակասություն թույլ տալով, նշում է, որ նրա թվագրումը նույնքան դժվար է, որքան Զենոբ Գլալի «Պատմության» թվագրումը (Անդ, էջ 120): Կամ

Միանգամից հարկ ենք համարում ընդգծել, որ մեզ ամենևին չի համոզում Մ. վան Էսբրոեկի դատողությունը տվյալ հարցի վերաբերյալ: Կաթողիկոս տիտղոսը, մեր կարծիքով, Հայաստան է թափանցել և կայուն կիրառություն գտել այն ժամանակներից, երբ հայոց հայրապետական գահին հաջորդաբար պարտադրվել էին երկու ասորի հոգևորականներ՝ Բրքիշուն (429—432 թթ.) և Ծմուելը (432—437 թթ.): Ինչպես վկայում է «Արևելից (Նեստորական) Եկեղեցու ժողովոց գիրքը», դրանից առաջ այդ տիտղոսը հստակ բովանդակությամբ լայնորեն կիրառվել է Պարսկաստանի ասորախոս Եկեղեցում: Մասնավորապես այն բազմիցս գործածված է Արևելից Եկեղեցու 410, 420 և 424 թվականների ժողովական արձանագրություններում²⁶: Այդ իսկ պատճառով տիտղոսի անկալությունը Փավստոս Բուզանդի և Ղազար Փարպեցու «Պատմություններում» միանգամայն բնական պետք է համարել:

Ագաթանգեղոսի նորահայտ խմբագրության թվագրման տեսակետից, մեզ թվում է, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև ասորերեն բնագրի հետևյալ հատվածը. «Հայաստանում կար Սանատրուկ անունով մի թագավոր, որը Քրիստոսին նամակ գրող Ուոհայի Աբգար թագավորի քեռորդին էր: Ասում են, որ նա Դավիթ արքայի ու մարգարեի ցեղից էր: Այստեղից էլ Հայաստանի բոլոր թագավորները Դավթի տնից են համարվում» (§ 1): Միայն այս փաստը բավական էր նորահայտ խմբագրությունը Թ—Ժ դարերով թվագրելու համար, որովհետև նրանում արտացոլված է այդ ժամանակի իրադրությունը, երբ Հայաստանում տիրում էին ըստ ավանդության հրեական ծագում ունեցող հազոտառունի թագավորները: Սակայն Մ. վան Էսբրոեկը հարցին մոտենում

մի այլ անիթով, առանց որևէ հիմքի, բացահայտ կապած է հայտնում Ղազար Փարպեցու «Պատմության» առաջին գրքի արժանահավատության նկատմամբ (Անդ, էջ 166. նաև՝ M. van Esbroeck, Le résumé, 1976, p. 499): Եթե նման վերաբերմունքը ներկի է մասնագիտական համապատասխան պատրաստություն չունեցող գրասերների համար, ապա նույնը չի կարելի ասել մի չափազանց բարեխիղճ և փաստասեր հետազոտողի մասին, ինչպիսին Մ. վան Էսբրոեկն է:

²⁶ Տե՛ս J. B. Chabot, Synodicon Orientale ou Recueil de Synodes Nestoriens, Paris, 1902, p. 1: (253), 26(266), 35(274), 37(276), 42(283), 43(285) և այլն:

Է հակառակ դիրքերից: Նրա կարծիքով, հիշյալ ավանդության հիմքը հենց խնդրո առարկա դրվագն է. եթե Սանատրուկը Աբգար թագավորի քեռորդին է, իսկ վերջինս համակարգության մեջ էր Դավթի որդի Քրիստոսի հետ, ապա դժվար չէր դրա հիման վրա հայոց թագավորներին ևս կապել Դավթի սերունդների հետ²⁷: Նման պարզունակ բացատրությունը (որ խոստովանում է ինքը՝ հեղինակն էլ), սակայն, խոցելի է մի շարք նկատառումներով: Բանն այն է, որ նշված ավանդության առաջին հնագույն աղբյուրը համարվող Խորենացու «Հայոց պատմության» մեջ, որտեղ հիշվում են և՛ Աբգարը, և՛ Սանատրուկն ու նրա հաջորդները, ակնարկ անգամ չկա հայոց թագավորների հրեական ծագման մասին: Նման ծագում այստեղ վերագրվում է միայն Բագրատունյաց տան նախարարներին, որոնք, ինչպես հայտնի է, Խորենացու օրոք (նրան նույնիսկ Ը դ. հեղինակ համարելու դեպքում) դեռևս թագավորական իշխանություն չէին ձեռք բերել: Ուստի ավելի հավանական է ենթադրել, որ ասորերեն բնագրի բերված ռատվածում արտացոլված է Բագրատունի թագավորների ծագմանը վերաբերող արդեն իսկ լայն տարածում գտած ավանդությունը, որ, ինչպես վերը նշեցինք, պատշաճում է Թ—Ժ դարերի իրադրությանը: Այս փաստն ակնհայտորեն հակասում է Ագաթանգեղոսի նորահայտ խմբագրության թվագրման վերաբերյալ Մ. վան Էսբրոկի առաջ քաշած տեսակետին: Սակայն հակասությունը կարելի է վերացնել, մտածելով, որ վկայակոչված տողերն ավելացվել են ասորերեն թարգմանության իրականացման ժամանակ, այն է՝ Թ—Ժ դարերում, երբ Հայաստանում արդեն տիրում էին Բագրատունի թագավորները:

Ամփոփելով վերը շարադրվածը, հարկ ենք համարում նշել, որ Մ. վան Էսբրոկի վարկածը Ագաթանգեղոսի ասորական խմբագրության հայերեն նախորինակի ձևավորման միջավայրի ու ժամանակի մասին, չնայած մանրամասներում առկա մի շարք հակասություններին, ամբողջության մեջ այնուամենայնիվ պահպանում է գիտական կենցաղավարման իր իրավունքը:

Վերջում ցանկանում ենք խորին շնորհակալություն հայտնել մեր հարգարժան գործընկերոջը՝ Մ. վան Էսբրոկին, որի սիրալի համաձայնությամբ «Էջմիածին» ամ-

սագրի ընթերցողներին է մատուցվում նորահայտ ասորերեն բնագրի հայերեն թարգմանությունը:

Ագաթանգեղոսի զանազան խմբագրությունների համեմատությունը հեշտացնելու նկատառումով հարկ ենք համարում մեր թարգմանությունը ներկայացնելուց առաջ քերել նորահայտ բնագրի դրվագաբաժանումը, որն իրագործված է Մ. վան Էսբրոկի կողմից²⁸:

Ա. Հայոց դարձը Սանատրուկի օրոք (§§ 1—4).

Բ. Անակի և Խոսրովի պատմությունը (§§ 5—15).

Գ. Գրիգորի և Տրդատի փրկությունը (§§ 16—27).

Դ. Տրդատի և Դիոկղետիանոսի պատմությունը (§§ 28—47).

Ե. Տրդատի վերադարձը Հայաստան (§§ 48—49).

Զ. Գրիգոր Լուսավորչի չարչարանքները (§§ 50—68).

Է. Գրիգորը վիրապում (§§ 69—73).

Ը. Հռիփսիմյանց կույսերի պատմությունը (§§ 74—116).

Թ. Հռիփսիմեի և Գայանեի մահատալությունը (§§ 117—123).

Ժ. Տրդատի պատմաբանությունը (§§ 124—135).

ԺԱ. Գրիգորի ելքը վիրապից (§§ 136—144).

ԺԲ. Հռիփսիմյանց կույսերի հուղարկավորությունը (§§ 145—150).

ԺԳ. Ծոմապահություն և վարդապետություն (§§ 151—191).

ԺԴ. Տրդատի ապաքինումը (§§ 192—206).

ԺԵ. Կուռքերի կործանումը (§§ 207—218).

ԺԶ. Գրիգորի գահակալումը (§§ 219—240).

ԺԷ. Հայոց դարձը (§§ 241—253).

ԺԸ. Մկրտությունը Եփրատում (§§ 254—263).

ԺԹ. Գրիգորի հրաժարումը և նրա հաջորդները (§§ 264—274).

Ի. Կոստանդին և Գրիգոր, Նիկիայի ժողովը (§§ 275—286).

ԻԱ. Գրիգորի մահը Դարանաղաց երկրում (§§ 287—292).

ԻԲ. Գրիգորի հուղարկավորությունը և նշխարների տեղափոխումը (§§ 293—300):

(Ծառունակելի)

²⁷ Տե՛ս M. van Esbree-k. Un nouveau témoin, p. 115.

²⁸ Անդ, էջ 18—19: